ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ մարտի 2025 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի №14Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, և հաշվի առնելով «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի մարտի 21-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Մեկ տարի երկու ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 31-ի «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արգեստ» հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №14Ա որոշմամբ «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0618 լիցենզիայով ամրագրված «Արգեստ» հողմային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը որոշման մեջ՝ «մինչև 2025 թվականի մարտի 30-ը» բառերը փոխարինելով «մինչև 2026 թվականի մայիսի 30-ը» բառերով, իսկ «մինչև 2042 թվականի մայիսի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2043 թվականի հուլիսի 31-ը» բառերով:

2. «ՍՈԼԱՐՍԻՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0618 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Արգեստ» հողմային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 30-ի №O.AB.100.12CIB.PIED.0.20919.23 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 10,000,000 (տասը միլիոն) դրամ գումարից 4 875 000 (չորս միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 9 750 000 (ինը միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2026 թվականի հուլիսի 14-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 30-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
___ մարտի 2025թ.